

Skype-ի լիցքավորում

Այսուհետ հնարավոր է իրականացնել Skype-ի հաշվի լիցքավորում "Իդրամ" համակարգի միջոցով: Լիցքավորման մինիմալ գումարը կազմում է 0.5 USD-ին համարժեք դրամ:

Լիցքավորման համար հաճախորդը պետք է սեղմի Իդրամ պաշտոնական կայքում տեղադրված Skype-ի բաննեռը, այնուհետև մուտք գործի իր անձնական ԻդրամID: Բացված էջում մուտքագրի իր Skype լոգինը և Skype-ի գաղտնաբառը, նշի այն գումարի չափը, որը ցանկանում է փոխանցել իր SkypeID-ին: Հաջորդ քայլով հաճախորդը պիտի սեղմի «Հարցում» կոճակը և մուտքագրի իր PIN-կոդը՝ վճարումը հաստատելու համար:

Երբեմն Skype ծրագիրը մի փոքր ուշացումով է ցույց տալիս լիցքավորման մասին ինֆորմացիան: Այդ պատճառով խորհուրդ ենք տալիս Skype հաշվին փոխանցված գումարի լիցքավորման մասին տեղեկատվությունը ստուգել www.skype.com կայքում:

Գույքահարկի և հողի հարկի պարտքի և տույժերի չափերը

Այսուհետ "Իդրամ" համակարգի միջոցով հնարավոր է տեսնել գույքահարկի և հողի հարկի պարտքի և տույժերի չափերը նախքան վճարում կատարելը:

Դրա համար անհրաժեշտ է ԻդրամID-ում մուտք գործել « Գույքի և հողի հարկ» բաժին, այնուհետև մուտքագրել գույքի տիրոջ անձնական կոդը և սեղմել «Փնտրել» կոճակը և համապատասխան տվյալները գտնելուց հետո կատարել վճարում:

Եթե Դուք Ձեր վարչական շրջանից դեռ չեք ստացել Ձեր գույքի անձնական կոդը, ապա կարող եք այն ստանալ առցանց: Դրա համար անհրաժեշտ է նախ անցնել նույնականացման երեք փուլերը, այնուհետև վերոնշյալ բաժնում սեղմել «Ստանալ կոդը» կոճակը: Դրանից հետո Դուք կարող եք ստուգել Ձեր պարտքերը և տույժերը և կատարել վճարում: